


ՀԱՍՏԷ

Rédaction du Journal Arménien "ARCHALOUYCE" Hotel d'Arménie S. Bulbulian (Egypte) LE CAIRE

Directeur EGHICHÉ TOROSSIAN

Ծանուցումներ մասնաւոր պայմաններով կ'ընդունուին. Ձեռագիրներ եւ չեմ տուիր.



ԱՐՁԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ. ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇՈՐԱԲ ՕՐԵՐԸ

ԲԱՏԱՆՈՐԳՐՈՒԹԻՒՆ

—*—

ՍԳԻՊՏՈՍ

Տարեկան 40 Եգ. օ. : Կ. Եգմմակայ 20

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան 12 Եգ.

Ապագիկ բաժանորդագրութիւն չի' ընդունուիր.

ՅՅԻ 22

ՏՆՕՐԷՆ - ԽՄՐԱԳԻՐ ԵՂՐԵԷ ԹՈՐՈՍՅԱՆ

Արտոնեայ եգիպտական հաստախոտքներէն

ՎԱՐՈՒԹԻԱՆ ԳԱՆՁԱՊԻՏ Ս. ՊՈՒՂՊՈՒԼՅԱՆ

ՅՅԻ 22

ՍՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԷՊԻ ԳԱՀԱՎԻԹՈՒՄ

Օրմանեան Պատրիարքին օրոգի էր, եթէ չեմ սխալիր, գահընկէց (Կարմիր) Սուլթանը զինք չըլապատող խելացիներով մտածեց Հայոց Ազգային Սահմանադրութիւնը սրբազրութեան բովէ մը անցընել, և այս իմաստով առաջարկներ ըրաւ Հայոց Պատրիարքարանին:

Ամէն կողմէ աղետարն վայնասունը եթերը թնդացուց, Օրմանեանի պաշտօնավարութիւնը նորանոր կասկածներու ներքեւ դրուեցաւ, Կեդրոնի Ազգային Վարչութիւնը առահի կազմալուծուեցաւ, պահ մը անարդուութիւն տեսցնող Պատրիարքարանի Դռնէն ներս, իսկ խօսքի ազգասէրները - որոնցմէ յ'անցելու մէջ զարդիս շատ ըլլալ կը կարծուին - կոկորդալիբ հահոյանքներ տեղալու պատրաստուեցան Ազգ. Սահմանադրութիւնը փոշոտումի են. թարկելու համարձակողներուն դէմ, ըլլային անոնք Պատրիարք կամ Վարչութեան անդամներ:

Բարեբաղդաբար թէ դժբաղդաբար, այն ատենները, բացի Կառավարական ինչ ինչ սեղմումներէ, որոնք բռնաբարութեամբ գրուեցան, և իրականին մէջ ալ արդէն ատկէ տարբեր բաներ չէին, Ազգ. Սահմանադրութիւնը ստորակէտի մը փոփոխութիւնը իսկ չի կրցց. և ազատութիւնը - գէթ ա'յսպէս պէտք է ըսել - երբ հաշկուեցաւ և մեր ազգին դէկը՝ ինքզինքնին ազատամիտ և ազատասիրտ յորջորջողներու ձեռքին մէջ ինկաւ, ահա՛ Ազգ. Սահմանադրութիւնը իր անդրանիկ հարուածը կը կրէ, նոյն իսկ մեր Ազգ. Երեսփոխանական Ժողովին ձեռքով...:

Այս խօսքերը ըսելու կը թելադրուիմ, Պոլսական լրագիրներուն մէջ հանդիպելով Ազգ. Ժողովոյ այն գեղեցիկ բայց անիրաւի որոշումին, որով ազգային տուրքը տարեկան 25 դրուչէն 10 դրուչի կ'իջեցնէ, որպէս զի չափահաս ազգայինները դիւրութիւն ունենան վճարելու և

մասնակցելու Վարչական ընտրութեանց քուէարկութիւններուն:

Խնդիրը՝ տրուած այս ձախող որոշումէն այդպէսնոց քակը ամբողջ տարրի մը մէջ իննայտ 15 դրուչին վրայ չէ: Ամէն անհատ ո'չ թէ մէկ տարուան մէջ այսչափ գումարի մը իննայտութեանը վրայ չի մտածեր, հապա մէկ երկու օրուան մէջ՝ ուտելիքի, խմելիքի, սուրճի և զանազան մանր մուկի ծախքերու մէջ անգամ կը կորսնցնէ արդէն նոյն չափ գումար մը, առանց անոր վրայ բնաւին անդրադառնալու: Ուրեմն այսպիսի որոշում մը, պարզապէս նախաքայլերն են Ազգային Սահմանադրութեան ծրագրեալ վերաբերմանը, որ դաժան Համիտի մը օրով իսկ տեղի չ'կրցաւ ունենալ...:

Իրաւ է թէ մեր Սահմանադրութիւնը լիակար օրինագիրք մը չէ, բայց միևնոյն ատեն վստահ պէտք է ըլլանք թէ՛ անոնք որ անոր խախտու հիմքերէն քար մը վերցնելու համարձակութիւնը ունեցան հիմայ, իրենց անցեալ գործունէութեանը մէջ՝ իրենց քանդածներուն տեղ ոսպի հատիկի մը չափ չէնք մը կառուցանելու ձեռնահաս եղած չեն... և միայն ու միայն քանդելով զբաղած են. և արդարեւ՝ որչափ գիւրդին է քանդելը... Այս է պատճառը արդեօք որ մերայիններէն շատերը իրենց մտաւոր և ֆիզիքական բոլոր ուժն ու կարողութիւնը քանդելու մէջ փնտռած են միշտ...:

Պիտի տեսնէք որ շատ չ'անցած Սահմանադրութեան հիմնական ու կարևոր սկզբունքներէն մէկը խնդրակամ պիտի պատասխանուի թէ՛ Կրնաք այս յօդուածն ալ փոփոխութեան ենթարկել, ինչպէս այն ինչ յօդուածը ենթարկուեցաւ ատկէ առաջ Երեսփոխանաց որոշումովը...:

Գալով քուէարկութեան մասնակցելու հարցին, Ազգային Ժողովը յաւիտենական պարսաւանքներէ զերծ մնալու համար կարող էր հետեւեալ որոշումը կայացնել:

1. Ամէն ազգային որ 21 տարին լրացուցած է և չափահաս, կրնայ քուէարկութեան մասնակցել անխտր:

2. Ազգային տուրքի գանձու մը տեղի կ'ունենայ հարսանիքի, պաշտօնական վաւերացման պէտքը անհրաժեշտ կալուածական առուծախի, Մկրտութեան և այլ յարմարագոյն պարագաներու մէջ:

3. Ազգային Ժողովը անձեռնհաս կը նկատէ ինքզինքը, գէթ արդի պարագաներուն մէջ, սահմանադրութեան վերաբերմանը զբաղիլ, և եթէ զայն օրակարգի անցընելէ անգամ չի ստպար ու խուսափիր, գոնէ Ազգային տուրքին քանակը նոյնը կը պահէ, առանց անիկա իբր չեզոքացնող ուժ գործածելու ազգայինց քուէի իրաւունքները բռնաբարելու և կապտելու ռեզիլու մտածումէն տարուած:

Ամսական երկու դրուչի տուրք մը ազգին սնտուկին վճարելէ արդէն՝ ազգայինները, չառչիական չտեսութիւններու ամենէն յետին օրինակներէն մէկն է: Եւ երբ մասնաւոր այդպիսի հրէական ստորնացուցիչ մտածելակերպ մը Ազգային Բարձրագոյն Ժողովէն կը բղիթ, մենք վստահօրէն կրնանք եղբակացընել թէ՛ մեր ազգը գէպի կորակուի Գահավիժումին է որ կ'առաջնորդուի մերիններուն ձեռքով...:

ԴԵՂՆԱԾ ԹՈՒՂԹԵՐ ԳԱՅԼ ԵՒ ՄԱՔԻ

(Շարունակութիւն Նախորդ քիւնէն) — Մե՛ծ վարպետութիւն, ըսաւ Գառնիկ: — Սքանչելի՛ հանճար, յաւել վահէ: — Անանկ չէ՞, գոչեց Տիգրան՝ այս անականներէն մի քիչ փքացած: Երկու համախոհները, տեսնելով որ իրենց զգուշութիւնը բոլորովին ապարդիւն չի մնաց, ձեռքերնին շփեցին գահունակութեամբ: — Տէր Ողորմես, ըսաւ վահէ, քեզ նո՛ր պիտի ճանչնանք: — Անձնուէրներդ միայն կրնան գնահատել քու հանճարը, շարունակեց Գառնիկ: — Հիմայ մտիկ ըրէք թէ ինչպէս ըրի, ըսաւ Տիգրան: — Վահէ եւ Գառնիկ ձեռքերնին ծոն, կերնուն վրայ դրին, աչքերնին Տիգրանին վրայ յառեցին և բերանաբաց ու մամլոփ սպասեցին: Տէրութեան եւ ազգին կենսական խնդիրներուն նուիր-

ուած խորհրդականներ աւելի մտադիր ողի չ'են կրնար ցուցնել, երբ մե՛ծաւուն քաղաքօրէն մը ատենաբանէ՛ մտալու տաքնապի մը վրայ:

Տիգրան վե՛հ ակնարկ մը նետեց իր հլու ունկնդիրներուն վրայ, ծնօտը չփեց եւ սկսաւ:

— Կը յիշեք անշուշտ այն շքեղ եւ փառաւոր պարահանդէսը զոր Մրտրակասիրաց Ընկերութիւնը տուաւ վեց ամիս առաջ:

Երկու արհեստակիցներ հաստատական նշան մ'ըրին զխոով:

— Ինչպէս բնականաբար կը գուշակէք, ես ալ գացած էի Աղաւնիին հետ: Ասանկ գեղեցիկ արթնները երբէք ձեռքէ փախցուցած չ'եմ արդէն: Մ'արդ չառ բաներ կը տեսնէ. շատ բաներ կը սորվի այդ լուսապաճոյճ սրահներուն մէջ: Միայն թէ, երբ ամուսնանամ - կարելի եղածին չափ ուշ - կիրս եւ զաւակներս պարահանդէսի դռնէն ներս չպիտի մտնեն... Ինչ եւ իցէ, պահ մը Աղաւնի քովէս հեռացաւ: Ես ալ՝ յոգնած՝ ասօղին անդին կը գտնուէի, երբ Յովնոս մը թեւս բռնեց եւ թաչեց:

— Ո՛վ ես ինչ կ'ուզես հարցոցիս: — Ձիս սենուակ մը տար, հոն կը հասկնաս, պատասխանեց:

« Հասկցայ... Թեւն առի եւ առաջնորդեցի այն խցիկը, ուրկէ դեռ նոր ելած էինք. ես եւ Աղաւնի... »

Տիգրան լռեց, հասկնալու համար այն սպաւորութիւնը, զոր իր պատմութիւնը անտարուիրս կ'ընէր իր ունկնդիրներուն վրայ: Ասոնք կը ժպտէին անբանօրէն:

— Հը՛... ըրաւ Գառնիկ:

— Կը հասկնանք, ըսաւ վահէ: Հոն, շարունակեց Տիգրան, Յովնոսի դիմակը քաչեց նետեց: Ինչ տեսնեմ, պարոններ, ինչ տեսնեմ, անըկարագրելի գեղեցկութեամբ դեռատի կին մը... աչքերս, յոյճեր բերանս, քիթ... չէք կրնար երեւակայել, իմ ալ դիմակս քաչեց նետեց, եւ այնքան սրտառուէ խօսքեր ըրաւ, որ ամենատեղ կին մ'ալ ըլլար դարձեալ մարդուն գուլթը կը շարժէր... Կ'աղաչէր: կը պաղապէր. ոտքերս կը պագնէր, կը հեծկտար... Զիս շատոնց կը սիրէ եղեր, բայց միջոց չ'է գտեր, որովհետեւ իր մարդը չափազանց նախանձոտ է եղեր: Այն գիշեր, ինչպէս ըրիք ըրիք Արուսեակ (անուր Արուսեակ է) իր բռնաւորը գինովցուցեր, եւ՛ բնազուռ մէն մղուելով՝ զիս գտնելու համար պարահանդէս եկեր, ետեւէս ինկեր եւ զիս մինակ տեսնելուն պէս թեւս փակեր է: Զհասկցայ եւ հարցնելու ալ մտցայ թէ դիմակիս տակ դիս ինչպէս ճանչցեր է:

— Ատոր մէջ չ'հասկցուելիք բան չկայ, ըսաւ Գառնիկ, բարձր եւ վայելուչ հասակի փարոս մ'եղած է իրեն:

— Սրբապանն քաղաքից առաջ- նորդուած է. ըսաւ Վահէ :

Տիգրան անսահման մնապարծու- թեամբ աչքէ անցուց իր անձը, որ մէկ միջր քառասուն սանդիւնիք բարձրու- թիւն եւ իննսուն երեք սանթիւնիք լայնութիւն ունէր, իր այս սքանչա- ցուածին մէջ մտացաւ որ քչիկ մը կը կա- ղար ձախ ոտքին վրայ . . .

«— Այն երջանիկ գիշերէն սկսեալ, շարայարեց Տիգրան, օրերուս կէսը Ա- դաւնիին եւ միւս կէսը Արուսեակին նուիրած եմ. . . Բայց վեց ամիսը՝ վեց ամիս է . . . եւ այս երկու տուներուն մէջ այ ցուրտ չընէր . . . տեսայ որ պի- տի ընկճիմ վերջապէս, հակառակ իմ պողպատեայ առողջութեանս . . . »

Անձնագովութիւնը արդէն տխուր դաղափար մը կուտայ ենթակային վրայ, եթէ նոյն իսկ իրապէս տեղի ունեցած քաղաքործութիւններով ալ հաստատուի Բայց երբ ինդիւրը յերևուած . . . չա- հատակութիւններու վրայ է այն ատեն թէ՛ ծիծաղ կը շարժէ եւ թէ՛ նողկանք կուտայ, Մեր պարտնայք Գառնիկ եւ Վահէ ալ խնդալէ պիտի ճաքիին, կամ Տիգրանը իրենց թուգորով պիտի գիտա- կառնէին եթէ չլինէին որ փոխառու- թեան համար եկած էին հոն, եւ՛ հե- տեւաբար՝ վատաբար ստիպուած էին իրենց փոքրոգիութիւնը շարունակել տանտէրը շողոքորթելով . . .

— Գարձեալ պրաւի՞ ըսաւ Վահէ :
— Է՛յ, կեցցես պէ՛, գոչեց Գառնիկ :
— Եւ, շարայարեց Տիգրան՝ ալ տերը ուռեցնելով, որովհետեւ միւս կող- մէն ալ Արուսեակ նախանձէն կը մեռնէր, զինքն ազատ ձգեցի որ միջոցով մը Ա- դաւնին ինձմէ հեռացնէ : Անա անոր գտած միջոցը՝ մտիկ ըրէք :

Տիգրան կարգաց Ադաւնիին նա- մակը, բնականաբար ցատկելով այն տողերը որոնք իր ծնողքը կը ցիտոտէին .

— Ըսել է որ, ըսաւ Վահէ, Ազաւ- նին քեզմէ հեռացնելու համար, Արուս- եակ քեզ իբրեւ սնանկացած ներկայա- ցուցած է :

— Ծիչդ, պատասխանեց Տիգրան :
— Խորագէ՛տ կին, բացազանչեց Գառնիկ :

— Պաշտուելու արժանի հողդ, արձագանգեց Վահէ :

3.

Օղերու եւ ապարանջանի խօսքը երկու բարեկամներուն աչքերը խոշոր- ցուցած էր, իբր թէ նոյն պահուն անոնց ճանաչելի փողփողումին ակնատես ըլլային լուսապայծառ սրահի մը մէջ : Ուստի չկրցան տիրանալ անտեղի հետա- քերթութեան մը :

— Անշուշտ մեծկակ գումար մը կը ներկայացնէ այդ գոհարեղէնը, զիտեց Վահէ :

Տիգրան սկսաւ խնդալ :

— Ո՞րչափ կը կարծէք, հարցուց :
— Ի՞նչ գիտեմ, պատասխանեց Գառնիկ, գոնէ երկու հարիւր սակի մը արժած ըլլալու է :

— Երկու հարիւր, գոչեց Տիգրան, քսան սակի, սիրելիս, քսան սակի, մի- այն ոսկիին արժէքը :

— Հապա մարգարիտները, ադա- մանդները, գոչեցին միաձայն երկու մտերիմները՝ ապշած :

— Կեղծ են, ըսաւ Տիգրան, Պօն մարչէ եւ ուրիշ վաճառատուններու մէջ հազարներով կը տեսնէք անոնցմէ :

— Եւ Ադաւնի չհասկցաւ, ըրին զարժացմամբ երկու ընկերները :

— Վասն զի զիտէ որ ճշմարտը նուիրել կարողութեան վեր չէ :

Վահէ եւ Գառնիկ սքանչացան Տիգրանին հնարագիտութեան վրայ, եւ որովհետեւ ալ մեկնիլ եւ ազատիլ կը փափաքէին, Գառնիկ ժամացոյցը կանց :

— Քանի՞ն է, հարցուց Վահէ :
— Ութն ու կէս, պատասխանեց Գառնիկ :

— Քանի՞ն պանդան պիտի գրտ- նուէնէիք :

— Իննին :
Երկուքը մէկէն Տիգրանին նայե- ցան՝ անձկանօք :

— Լաւ միտքս եկաւ . . . երկու վայրկեանէն կուգամ, ըսաւ եւ սենեա- կէն դուրս ելաւ :

Շտրուակելի Ա. ՊԱԼԵԱՆ

ՎԱՐժՈՒՂԻ ԿՈՒՉՈՒԻ

Պատուաւոր ընտանիքի մը երկու փոքրիկները դաստիարակելու հա- մար վարժուհիի մը պէտքը կայ :

Փոհացուցիչ ամսական :

Իրմել և Արչալոյս ի Տնօրինու- թեան :

ԱՆՉՊԱՅԻՆ

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Գալստեան վարժարանի հար- ցաքննութիւնները աւարտած են :

Երջած զրոյցներուն և քիչ մ'ալ հրապարակային քննադատութիւն- ներուն նայելով՝ արդիւնաւոր վիճակ մը ներկայացուցած չեն այս տարուան եղածներն ալ : Միայն հաւաստի ազդիւրներէ կը տեղեկանանք որ՝ աշակերտները հաւասարապէս յա- ջողագոյն վիճակ մը ցուցադրած են թուաբանութեան դասին մէջ, ո- րուն ուսուցիչը, ո՛վ որ ալ ըլլայ, շնորհաւորութեան արժանի է իր խղճամիտ աշխատութիւններուն հա- մար :

Յառաջիկայ տարեշրջանը՝ ինչ- պէս կերելի, շատ մը նորութիւն- ներով և փոփոխութիւններով պիտի օժտուի վարժարանը, և փոփաքելի է որ նոր ուսուցիչները փարսիզա- նութեան հետ ինչպէս և լաւիկ միջիկ աշակերտներուն միտքը զարգացնե- լու հետամտին, որովհետեւ այս- պէտով միայն կարելի պիտի ըլլայ օգտակարապէս գործածած ըլլալ Գալստեանի հոշակաւոր տարեկան պիւտեճէն :

ՄԱՆԻՍԱԼԵԱՆ

Կիրակի օրը Կրէնթանիա թատ- րոնին մէջ, նախագահութեամբ Առաջնորդական Տեղապահ Գեր, Տէր Թորգոմ Եպիսկոպոսի, տեղի ունե- ցաւ Մանիսալեան քոյրերու անհա- տական ուժերով կառավարուած Վարժարանին մրցանակաբաշխու- թեան հանգեսը, մէկ քանի շրջա- նաւարտուհիներ ընծայելով :

Աւելորդ անգամ մ'ալ կրկնած պիտի ըլլանք այն գովասանքը, ո- ընց ամէն տարի պարբերաբար կը արժանանան Մանիսալեան քոյրերը իրենց ջանասիրութեան շնորհիւ :

Երջանաւարտուհիներուն մէջ աչքառու տեղը կը զբաւէր Օրթորդ- Հէրմինէ Ա. Սէտէֆանեան, որ պատ- կեց իր ուսուցչուհիներուն ջանքերը և փառքն ու պարծանքը պիտի ըլ- լայ իր հօր, մեր զուարթախօս բա- րեկամին՝ Տիար Արչակ Սէտէֆանեանի :

Պէտք է շնորհաւորել զինքը, իր հոգեհատարին այս յաջողութեա- նը համար :

ԱՆԱՆԵԱՆ ԵՂԲՆԻՔ

ՊԵՐՏԱԿ ԱՐԱՆՑ ԵՐ ԿԱՆԱՆՑ
ՇԱՐԱ ԷՄԱՏ - ԷՑ - ՏԻՆ, ՍԱՆ ԺՈՂԷՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԴԻՄԱՑ

Մաքուր, արագ եւ երաշխաւորելի եւ մեր պայսրասած ԴՕՍԹԻԻՄ- ները անէն անոնց հաւատ, որով կուզեն ճաշակաւոր հագուստներ ու- նեմուց, Չափաւոր գ, Անույ :

ԱՆՉՆՈՒՐԱՑ «ԲԵՈՒ» Ի ՅԻՇԱՍԱԿԻՆ
(Ս. ՊԱԼԱՍԵՆ)

Կը թաւային օրերն անթիւ, անհատուած,
Յուշերս ս-ո քեզ կը թռչտին, կայեհին :
Օ՛, ես չուիմ մի սիրտիսն, տեղադրուած
Կը հրեմիմ հոս՝ մէջ հրակերպ գեհներն :

Գիշերային երազներուս մէջ ճնշող,
Արեգունի զէմքը չայելի զուարթ շող
Կարձանանայ, կը ժպտի երբ մեղրակաթ,
Յիշեմ յայնժամ խնամքդ առ իս խանդակաթ :

Երջանկաւոր օրերը հին խաբուսիկ
Անցան թէեւ որք հապշտապ ու անդարձ,
Բայց գգուեն երբ ճակատս խորշում հուսկ այրած,
Նետուի հողիս անցեային պերճ տաքուկ գիրկ :

Անշնչացած շիրիմիդ շուրջ տրտմաութի,
Գարնանաբոյր ծաղիկներէն պսակներ
Հիւսեն պիտի զաւակները քու ցեղիդ,
Որոնք զրկանքն ընդգրկած են սոսկ ընկեր :

Ալ հանգչի՛ր հոտ՝ լինի հողիդ թող խաղաղ,
Ուր ոչ դաժանք, ո՛չ բռնութիւն կը տիրէ,
Հողակոյտիտ՝ ծաղկափթիթ շուրջ իր տաղ
Երգէ սոխակն՝ ու թող արեգն լոյս սփռէ :

Ա՛լ հանգչի՛ր զուն մենարանիդ մէջ խորունկ,
Ըմրոշխնեմք մենք յիշատակիդ կընդրուկ, խունկ,
Փաղափարիք քու պաշտելի, ո՛վ Բեռի,
Մենք նուիրուինք՝ ըլլա՛նք յաւէտ թող գերի :

Հանգչի՛ր, հանգչի՛ր, զի դուն եղար յաղթական,
Հանգչի՛ր հպարտ՝ տակ զրօշակիդ Մարտական,
Եւ քու շունջդ հերոսական, Արացիկ,
Մեր շեփորը լինի դարեր հիւսիցիկ :

1914 Ապրիլ 13
Բոնսրանցայ

ԿԱՐԱՊԵՏ Կ. ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ

ՇԱՐԹՈՒԱՆ ՆՈԹԵՂ

ԱԶՄԻՆ ԵԿԱԿ, ԱԶՄԻ ՊԷՅԸ ԳՆԱՑ . . .

Իրաւ է որ թերթերը լեցունելու համար նիւթ պէտք է, եւ երբեմն յո- գրողները՝ լայնածաւալ օրաթերթերը լեցնելու համար կ'անհրկին կը մնան, ի՞նչ գրեն որ քիչ մը հետաքրքրական ըլլայ, ու ընթերցողները թերթ մը աւելի գնեն . . .

Կռիւ մը, ոճեր մը, քիչ մը արիւն, չորս ոտիկան, ազմուկ, օգնութիւն ա- զաղակող պաշտօնական սուլիչներ կա- ռապան մը, արիւնտաւ մալդ մը - ե- րիտասարդ կամ ծեր - եւ մտքերը խը- նուած ու քիչ մ'ալ երեսները ճանկարը- ուած կին մը կ'առքին մէջ, եւ անա- սմարտիկ հետաքրքիրները հոն կը հաւաք- ուին . . .

Այս ճշմարտութիւնը ջուր չի վեր ցընել, Օրինակները շատ պարճախօս են, Հատ մայ աւելցնեմ շատերուն վրայ, Առջի օրը՝ կէս օրին ատենները՝ Կանս

Պատ Ապպասի մէկ անկիւնը նստած, Լօյլին Պրայն տեսակէն գովասուն գարե- ջուրի գաւաթ մը սեղանիս վրայ, խո- բունիկ մտածումներու մէջ թաղուած, հանդարտ կեանքը կը ճաշակէի, Ինձմէ անդին ուրիշ մէկ քանիներ ալ՝ աւելի կամ նուազ տարբերութեամբ՝ նոյն հա- ճոյքը կը վայելէին, երբ անկիւնի դի- նետունէն գրագ, գրագ, աթոռներու ընդ- հարուստ ձայն մը բողոք ուղարկութիւն- ները այն կողմը գրաւեց, Չորս կողմե- թէն հոն՝ լը վազէին, կոտորներուն շուրջ մէկ վայրկեանի մէջ արդէն հետա- քրիրներէ կազմուած լայնածաւալ պատ- նէջ մը կ'առուցուած էր . . .

Աթոռները՝ գլուխներու վրայ աւե- րատարած ելեւէջներ կ'ընէին, Ապա- կիներ ու գաւաթներ իրարու ետեւէ գետնաթաւալ կը խորտակուէին հաղարա- ւոր կտորներու վերածուած եւ նոր ուժ մը կ'աւելցնէին կոտորներու մոյլեգործին գերագրգռուած ետունդին վրայ, խաղա- ղութիւնը հաստատուելու համար կուռն մէջ մտնելու քաջութիւնը ունեցողները՝ քանի մը աթոռի կոչաւ ու կուռ հարուած կ'ընդունէին իբր վարձատրութիւն ի-

րենց խաղաղասիրական ազնիւ զգացմանց... Անկարգութիւնները իրենց գա- գաթնակէտին հասնելու վրայ էին, երբ մեր սպիտակազգեաց հերթապահ ստոր- կանը՝ բարեհաճեցաւ իր հանդիսատեսի զերբը փոխել, գործնական կեանքի մէջ մտնելով՝ կարգը վերահաստատելու վրայ մտածելու համար...

Բիշ մը եւս քաջըլուծներ, նոր փլուզում մը կտրտած գաւաթներու, նոր հանդիսներ, վերանորոգ բայց կատարի ընդհարում մը եւս, անորոշ ուղղութիւններէ եկած մէկ քանի ա- թոսներ՝ հանդիսադերձերու գլուխներուն, ձերբակալութիւններ, եւ քիչ մը յետոյ կարգը վերահաստատում էր արդէն... ու ես՝ ինչպէս նաեւ ուրիշները կը վե- րագառնանք մեր գարեջուրի գաւաթնե- րուն թովիկը դարձեալ խոկալու եւ ա՛յնքան անսեղի ու ցուազինորէն ընդ- հատում նիւթերը որոնալու...

Բայց նախ պէտք էր կռիւն յա- ռաջացած վայրկեանական տպաւորութիւնը փարստել, ու ինքզինքս կը մխիթարեմ մտածելով որ՝ «կարծէ՞ք արդեօք սրճա- րանի մը մէջ սպասարկող մէկ երկու Պէրպէրի ծառաներու հանած աղմուկովը հետաքրքրուիլ... պէտք է ըսել թէ այս անգահին իրարանցումը երկու սեւա- մորգերո յարուցած կոթուն էր... սակայն մարդոց հոգեբանութիւնը այս է եղեր, եւ երբ կոթի մը կամ խոչոր ու տարօրինակ ձայներ կը լսուին բոլոր, ուշադրութիւն- ները՝ մէկ զսպանակէ շարժումով պէս՝ ա՛յն կողմը կը կեցրոնանան:

Այս կարգի իրարանցումի մը կը նմանի ո՛րեւէ Ազմի պէյի Եգիպտոս ժա- մանումը, եթէ երբէք այդպիսի մէկը եկած է ստուգիւ, տեղական թերթերուն ըսածին նայելով:

Կ'անմէք եւ պէտք էր որ՝ այն թեր- թը՝ որ այդ լուրը պէտք ունեցաւ յա- ղորդելու, բարութիւն ունենար նաեւ՝ անոր լուսանկարը միասին տալ:

Ազմի պէյը ըսուածը անմասօթ մը չէր, նախապէս Կ. Պոլսոյ Ոստիկանու- թեան տեսուչը ըլլալուն համար եւ դիւ- րութեամբ կարելի էր լուսանկարը ու- նենալ...

Յետոյ, Ազմի պէյ, եթէ ոճրա- գործութեան նպատակներով հոս եկած էր, այդպիսիներուն համար, Եգիպ- տոսը վարդազոյն ընդունելութիւն մը սահմանած չէ՝ կը կարծենք...

Երրորդ՝ Եգիպտոսի ընտելութիւնը եթէ ճանհայ Ազմի պէյերը, անոնց բա- րի գալուստ մարթելու եղանակներն ալ կ'ուսուցնասիրէ...

Ուրեմն, պէտք է որ ենթադրենք թէ՛ Ազմիներու գալուստը պղծ մըն է, ո՛չ այնչափ ստոյգ, ո՛րչափ Պէրպէրիներուն Էգիպտոսի կողմը, որոյ մասին եթէ մարդ ուզէ՝ մէկ ու կէսէն աւելի սիւնակ կրնայ լեցնել բաւ է որ ընթեր- ցողները չիտիեցնելու անխղճութիւնը ունենայ...

ԴԱՍՍՏՈՒ

Տ Ե Ը Լ Թ Ծ

ՆԱԽԱՐԱՐԱԿԵՏՐ ԵՒ Վ. ՀԻՆԱՔԻՆ ԻՐԷՆՈՒ ՓՈՋԱ ԱՆԵԿԱԼ ՕՐ ԱՂԵՔԱՆԳՐԻԱ ՏԵԳԱՓՈՒԿԱՆԵԿԱԵ ԱՄԱՌՈՒՄ ԵՎԱՆԱԿԸ ԱՅՆՈՒԵՂ ԱՆԵՆԵ ԼՈՒ ՀԱՄԱՐ:

Վազգենքու Նախարար Մօհէպ Փոջա և Գետական գործոց Նախարար Ապտալ Խալէֆ Փոջա Սարվաթ, մին Կ. Պոլիս, միւսն ալ Եւրոպա մեկնման պատճառաւ Աղէքսանդրիա մեկնող Նախարարաց շարքին մէջ չեն գտնուիր:

Նախարարաց Խորհրդոյ՝ Բարտուղար Սհմէտ Փոջա Չաքի և ու-

րիչ պայտօնատարներ ևս Աղէքսան- գրիա մեկն ցան, ուր պիտի մնան՝ մինչև Նախարարապետին ի Գահիրէ վերադարձը:

ԱԶՄԻ ՊԵՅ

Անցեալ ամիսներ՝ իբր մատնիչ Հնչակեաններու Մասնաճիւղին սրոշ մամբ Կուսակցութենէն արտաքը- ուսած Արթուր Եսաբեանի մեղաւորից և Կ. Պոլսոյ ոստիկանութեան Նրո- ժարեցուցեալ տեսուչ Ազմի Պէյին համար տեղական թերթերը կը գրին թէ՛ Եգիպտոս կը գտնուի և ու- շագրութիւնը կը հրաւիրեն Եգիպ- տական Կառավարութեան՝ անոր ներկայութիւնը ճշգրիտ յետոյ, խիստ հսկողութիւն ի գործ գնել, հասնական միջադէպերու առջևը առնելու համար:

Արդարեւ այդ Ազմի անուն մար- դը՝ մէկ քանի մեղաւորիցներով Յը- րանսայի ստանին մէջ՝ անխղճ մահափորձ մը ըրաւ օճիֆ Փոջայի վրայ, սակայն իր Արթուր Եսաբեան անուն ոչնչութեան ներկայացուցիչ բարեկամէն գտնուելով զինքը, շատ վտանգաւոր մէկը կ'զգար ըլլալու չէ, և եթէ հոս կը գտնուի, մէկ երկու բարի շարժներ անգամ կրնան զգա- ցնել այդ մարդուն թէ՛ Եգիպտոսի մէջ ինչպէս կարելի է վարուիլ Ազմիներու հետ...

ԿԻՆ ԵՒ ԴԱՆՈՅՆ

Անցեալ օր երեք զաւակներու հոյր և Տպարանի աշխատակուր Պ. Վէնչէնցօ Տի Փասքալ, 35 տարե- կան, զոհ գացած է անօրինակ սճիրի մը:

Տի Փասքալի ծանօթներէն մին, Կալիֆի անունով՝ կաւատութեան և ստորին դասակարգի բոլոր աղտե- ղութիւններուն մէջ մինչև գաղաթը թաթխուած մը, աչք կը դնէ խեղճ գործաւորին կնոջը, որ չ'համակեր- պելէ զատ, իր ամուսնոյն կ'իւրացնէ եղելութիւնը:

Անցեալ Կիրակի օրը Էգիպտոսի մէջ Տի Փասքալ և Կալիֆի իրարու կը հանդիպին և կատարի կոթի մը կ'սկսի, որոյ միջոցին Կալիֆի իր դաշոյնը հանելով կարծակի արա- գաւ թեմար իր հակառակորդին փորը կը մտնէ ու կը փախչի: Տի Փասքալ թէ՛ և նախնական դարմանները կ'ըն- դունի, բայց վերջին ծանրութեան չ'կրնայով տոկալ, իր հոգին կը փչէ խոր սուգի մատնելով իր կողակիցը և երեք զաւակները:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԹՎՐԻՒՐ

Հակառակ որ Առողջապահական Վարչութիւններ գոյութիւն ունին Եգիպտոսի մէջ, հակառակ որ այս վարչութիւնները զանազան ազդու միջոցներ ձեռք կ'առնեն հանրային առողջութիւնը պահպանելու համար, դարձեալ՝ եթէ լուրջ քննութիւն մը բացուի թմրեցուցիչ դեղերէ (nar- cotique) յատկէ ևկած աղետալի գէպքերուն թիւը սահմակցուցիչ համեմատութեան մը հասած պիտի գտնենք պայն:

Այս վերջին քանի մը ամսուան մէջ, տեղական թերթերու արձա- նագրած թմրեցուցիչներու աւերները եթէ ի նկատի ունենանք՝ և ստոյգ գիտցուածներն են միայն... որովհետեւ չի գիտցուածներն ալ շատ ըլլալու են՝ պիտի զարմանանք թէ՛ ինչպէս հոգածու Առողջապահական Վարչութիւններու ձեռքին տակէն և հսկողութենէն կը վրիպին թմրե- ցուցիչներու ապօրինի ելքը իրենց համար սահմանեալ տեղերէն:

Գողբը իրենց արհեստը դիւ- րութեամբ գործ դնելու համար թըմրեցուցիչ օժանդակութեան կը դիմեն ստէպ:

Ա Շ Խ Ա Տ Մ Ն Ո Ց

ԱՊՈՒԵՏՍԱԿԻՏԱԿԱՆ ԵՒ ԸՆԹԱՑԻԿ ՓՈՐԱԿՐՈՒԹԵԱՆՑ

Ն ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Օրենսդրի Հրապարակին վրայ. Բրիտայ Պատին դիմաց:

Վարչարարութեան արտաքը- ուսած Եգիպտոսի վարչարարութեան կը կիրարկուին մեր աշխատանոցին մէջ կատարեալ ճշգրտապահութեամբ: Առեւտրական գրասեն- եակներու յատուկ այլազան մթերքներ ինչպէս՝ Soapstone, պիւստոքոն պղինձէ և քասուլուէ քիւլպրիք քոր քիւլպրիք եւ այլ որոնք մեր արտադրութեան տա կը գտնուին դիւրամատչելի գինով:

Impression en Relief

ՀԱՅ ԵՐԳԵՐԸ

ԻՐԱԶԻԶԱՅԻՆ ՄԹՆԱԼՈՐՏԻ ՆԵՐՔԻՆ

FRATELLI DE SALVO Quartetto Italiano CAIRO

Այս է այցեքարտը գեղարուես- տական քառեակէ մը բաղկացած այն նուագախումբին, որ կ'ան Պատ Ապպասի բացումէն ի վեր ըս- տանցնած է նուագել երկրորդները, և մինչև կէս դիշեր և քիչ մ'ալ աւե- լի՝ իր հմուտը ազդեցութեան տակ պահել նուագ սէր այցելուները:

Իր արուեստը և անհատական Տիրապետներն են ասոնք. Իսա, է որ հարեանցի անուարի որ պոտոցու- նեն Եղանակաւորեալ երգի մը վը- րայ, ու վայրկեանայէ շունչ և հոգի կուտան անոր՝ նուագի իրենց գոր- ծիքներով, Երիտասարդ Խ. Տապետ Տօնիօյի (Անիօնիօ) շաւթակի կըն- տընտոցէն յորդած սլացիկ և սուր, ազդեցիկ ու զգլխիչ և կանոնաոր- ուսած ճիշտովը...

Սալվօի այս չորրորդութիւնը մի- ջազգային շրջանակի մէջ փոխադրած է նաև հայութիւնը՝ իր երգերովը, որոնց Իտալացի աղջիկներու տակ զգեցած կենդանութիւնը բացատրե- լու համար բառեր պէտք են, զըտ- ուսած, բիւրեղացած և արտակարգ բացատրութիւններ տալու սահմա- նուած ըլլալու պայմանաւ:

Այսօր և վաղը (Կիրակի) երե- կոյ, Սալվօի քառեակը յատուկ տեղ մը պիտի տայ իր միջազգային ռե- ղերտաւորին մէջ՝ հետեւեալ հայ երգերուն, աշու- քուրմա եղանակ- ներէ եսքաններ դնելով անոնց մէջ:

- 1. Արիք Հակազունք, 2. Բամբ որտան, 3. Ո՛հ ինչ անուշ, 4. Հերիք որդեակք, 5. Կիլիկիա, 6. Հայրիկ, 7. Մայր Բրաքսի, 8. Տալուսիկ, 9. Արի իմ սոխակ, 10. Բոլոր բարձր, 11. Երգ Ազատութեան (Վաթանի) և՛ 12. Սինանեանի Գեղարարութիւնը:

Հայեր, կէէ՛ք միասին գնա հատենք հայութիւնը պանծացնող այս գոհարները... ՎԻՐՈՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Կ. Պոլիս 26 Յունիս. - Թայէ- առ Պէյ Միխայիլի գոյնազանը պաշտօնակն ըրաւ, Յոյներուն աւ- աստաղը արգիւնյու համար պէտք կ'ըլլած միջոցները ձեռք չ'առնելու համար:

Կ. Պոլիս 26 Յունիս. - Միջեր- կրակակն ակադեմիայի նախարար ին հրահանգարդ ու յար Պոլիս կը հաս- նի և շարք օրը (ու յար) Սարքա- նէն պիտի ընդունուի, Կիրակի օրը (վաղը) ի պահու Մոլիսիայի շը- ֆաւստակն մը պիտի տրուի պաշտօնի մէջ: Երեքշաբթի օրը Մոլիսիայի նախարարն ալ նուցկեալ մը պիտի տայ և Չորեքշաբթի օրը Պոլիսէն պիտի մեկնի Մոլիսիայը:

Վրէժխնդրութեամբ լեցուած երկեսը շարագործները դարձեալ նոյն միջոցը կը նախընտրեն: Վեր- ջապէս՝ ասոնց տեսակները մի առ մի թուելով գուրեւ ելլել կարելի չէ, և կը կարծուի ալ որ՝ ո՛րեւէ Վարչութիւն, ո՛րչափ ալ կանոնա- ւորուած ըլլայ այն՝ զժողովրդի թեմամբ պիտի կարենայ պայքարել այս զեղծումներուն դէմ:

Ինչ առջի օրը՝ Երազարի մէջ շարք հոգի գետնին փռուած գտած էր ոստիկանութիւնը, որոնց երկուքը մինչև հիւանդանոց հասնելը միտած էին և երկուքն ալ վտանգի մէջ կը գտնուին եղեր:

Ասոնց պատճառը, Մասազու- շայէն վաճառորդի մը ռեզլամի հա- մար գրուած քաղցրաւենիներն են եղեր...

ՅՈՒՑԱԿ Ե

Թայսի (Կեսարիա) նշքրուած վա- ժարակի կից նորահաստ երկեսը Ման- կապրտեգի նուիրահաստեանց:

Մաթոսեան Անճիմ Ընկերութիւն 200, Երուանդ Ազաթօն Պէյ 100, Տիգ- րան Բէյէկեան 100, Մկրտիչ Անդ- րանիկեան 50, Լիւսն Փոփազեան 50, Գաւնիկ Յովակիմեան 50, Հրանտ Բէ- չիչեան 40, Յարութիւն Բէյհասեան 40, Հեւեւեայեան 20 ակաւ Ե. Գ. վճարած են Տիգրան Հազարեան, Տիրան Մար- տիրոսեան, Սմբատ Փոփազեան, Թով- մաս Բրուսեան, Վահան Թահթեան, Յակոբ Գազանեան, Յովհ. Գարեբըթ- եան (Չակազիկ), Իսկ. Մէօթէմէտեան (Չակազիկ), Ստեփան Իրիքեան, Մէթոք Մկրտիչ Սոսեան Մէթոք Արմ. Մէօթէմէտեան, Ս. Սեւեան, Ներսէս Նէ- տուրեան, Արմենակ Մալքեան, Տ. Ա. Եւսեփ Բէյ. Երանեան, Տ. Մարթէ Բե. Վարդանեան, Յովհ. Բիրքեան, Ե. Օ. Թ. Բէյհասեան Եզր Դրեգոր Գազանեան Հեւեւեայեան 10 ակաւ Ե. Գ. վճարած են Գ. Արսլանեան Եզր, Կարապետ Վարդուկեան, Արմենակ Պէտէվեան, Թովմ. Գարագաշեան Արարամ Արապ- եան, Պետրոս Մալքեան, Բենիամին Վարդուկեան, Տ. Յ. Երիկեան, Համ- բարձում Փոփազեան, Տէր Ստեփանեան Եզրաբ. Գէորգ Արապեան, Հէյրմեան Եզրաբ. (Չակազիկ), Չաքար Թօքաթ- լեան, Ի. Սարգեան, Տ. Յ. Բէյ. Յա- կոբեան, Յարութիւն Հալաճեան, Ս. Օտապաշեան, Ապահ Պետրոսեան, Խա- չիկ Արթիկեան:

Table with 2 columns: Name, Amount. Total 4640.

Մանկապարտէզին Հողաբարձու- թեան հասցէին գրկուեցաւ թիւ 179858 160441 եւ 274517-161516 2 Չէրքու ևս (20) քսան Օսմանեան ոսկիի:

T I R I N G

Թ Ի Ր Ի Ն Ք

ԳՐԱԿԻ ՓՈՂՈՑ ԵՒԻԿԻՆ ՓԱՍՏԱԼ

Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ Ա Ն Կ Ի Ց

ԵՂԱՆՈՎԻՆ ՅԱՐԱՐԱՐԱԾԵՆ ՏԵՍԱԿ ԿՈՐՈՒԹԻՒՆԵՐ ՀՈՍՍԾ ԵՆ
ՓՈՒՐԱՑԻՔ ՕԳՏՈՒԼ

Կ. Պոլսոյ ամենածանօթ Թիֆլիսի Տան Գահիրէի
նորահաստատ Մասնաճիւղն է .

ՏՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂՔԱՅԻՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լ. ԵՆՈՎԻԿԱՆ ԵՒ ԸՆԿ
ԱՂԵՔՍՈՒՆԴՐԻԱ (Եղիպտոս)

Շարժական կանոնաւոր երթեւեկ .

Միացեալ նահանգներու , Բա
նտայի եւ Հարաւային Ամերիկա
յի համար .

Գաղթականներու համար չափա
ւոր գին .

Աչքի ընտելութիւնը մոխրաւոր
կը կատարուի տեղւոյս մէջ .

Մանրամասն տեղեկութեանց
հաւատ դիմել Կործակալութեան .

ՄՕՀԱՄԷՏ ԱԼԻ ՀՐԱԳԱՐԱԿ

Հեռագրական Հասցէ — ԼենՕՔՊ

Փոսթարկի Թիւ 897

Թուրքիոյ գաւառներու մէջ

փոխ - գործակալներ կը փնտռուին .

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԱՂՔՍԱՍԽԱՆՄ ԸՆԿՈՒԹԵԱՆ
ԳԱՀԻՐԷՒ ՀԱՅՈՑ

Ձևի Թիրաժ

Գահիրէ, 21 Մուհիս 1914

Առաջին պարզեւ

Թիւ	9929	Ղրշ	Ողջ	4000
"	3846	"	"	400
"	298	"	"	200
"	15595	"	"	100
"	3186	"	"	"
"	6919	"	"	"
"	7018	"	"	"
"	5971	"	"	"
"	15898	"	"	"

Հետեւեալ 40 թիւերը կը շահին 70ա-
կան զրուշ .

189	232	355	741	1546	1857	3868
4169	4377	5241	5439	5959	6652	
6867	7570	7612	8800	8886	9412	
9589	9803	9989	10869	11735		
11741	11811	11986	12355	12414		
12559	13408	13520	13701	13737		
13867	14284	14335	14429	14779		
15920						


ՓՈՐԱԳՐԻՉ

Ա. ՍԻՆԷՄԵԱՆ

ԶԻՆԳՕԿՐԱՔ

Մոնթանէս Աշի Փողոցին վրայ
ՇԱՐՔ ԹՕՐԿՈՒՄԱՆ

THE SINGER MANUFACTURING Co



Շարժ-էլ-Մարապի Տարից Պրայնի սեփականութեանը մէջ .

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԵՐներն են եւ ասոնցմէ
մինչեւ ցարդ 22,000,000 հախուած է .


400 հազար վրայական եւ մեքայներով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախոյնի մէջ ստացած է .
ՀԱՅՐԱՅԹԻՉ ԹՈՒՐԿԻՈՑ ՀԱՅՐԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ
ՀԱՅՐԱՅԹԻՉ Ն. Բ. ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ ,
ուշագրութիւն գարձնել
իւրաքանչիւր 'եքենայի
վրայ ՍԻՆԵՐի ներկայ
յարկանշից



Չրի դասեր և նորոգու-
թիւններ , յաճախորդաց
տուններուն մէջ .

Վերականգնող զուրութիւն

Փոխանակութիւն էրներու
նորոգութիւն ամեն կարգի
Մեքենայից

ԳԻՆ ՉԱՓ :

ԱՇԽԱՐՀԻ ՊՈՂՈՐ ԿԱՀԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄՕՍՆԱՃԻՂԻՆԵՐ ՈՒՆԸ

ՀԱՇՎԱՐԱՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ՊԱՋԱՐ ՄԻՐՈՒՐ ԹԻՒ 19

ԱՒԵՏԻՍ ՊՅՅԱՃԱՆ

Մեր ճաշարանին մէջ կը պատ-
րաստուին Եւրոպական եւ Արեւել-
եան ընտիր կերակուրներ . պան-
դուխտ երիտասարդները եթէ ան-
գամ մը այցելեն մեծապէս գոհ
պիտի մնան մատչելի գիներէն և
սպասակութենէն . 14

Գ Ո Ր Մ Ա Կ Ա Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն

Արշալոյս ի ամբողջ Ռուսա-
նիոյ գործակալութիւնը ստանձնած
է Տիար Կ. Փիլիպպոսեան , որուն
պէտք է զիմել թերթին վերաբեր-
եալ ամէն գործերու համար .
Մեր գործակալին հասցէն է .

Mr. G. B. Pilibossian
F. American
83 St. Mangalia
(Roumanie) Constantza

Նոյնպէս Արաբկիբի գործակալն
է Տիար Միսաք Ա. Սուբեան , ո-
րուն պէտք է զիմել թերթին վե-
րաբերեալ բոլոր գործերու համար .

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԿԵՐՉԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ
Փոխադրուած է Շարժ Ապտ Էլ Ազիզ
Ապտինի Գարագոյին մօտ .

Անոնք որ ճաշակաւոր գոսթիւն մ-
աննալու համար զանազան տեղեր դի-
մած ու գոգոհ մնացած են , թող ան-
գամ մը մեր վաճառատունը այցելեն .
պատրաստ եմ իրենց հետ պայմանաւոր-
ուի որ' եթէ իրենց յանձնարարութիւնը
նը գոհացուցիչ չ'գտնեն , կանխավճարը
ամբողջովին ետ պիտի ստանան .

Այս պայմանը՝ ճաշակաւոր հազ-
ուելու փափարոզներուն համար , նը-
պատաստուր առիթ մը պիտի ըլլայ .
Ապտինի ապագրանքները նկատու-
ղութեան շնորհիւ , եւ անոնք որ
ինձի կը դիմեն , դիւրաւ կրնան ըմբռ-
նել ապտինի տարբերութիւնները ,
մէ գործի մաքրութեան եւ թէ գի-
ւերու մասին .

1-50 ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԻՍՏԱՆԻՑՈՒՄ

Ազգ. քանդակիչ և Գաւառներու
համար գործակալներու պէտքը
կայ . փափուքովները կրնան զիմել
և Արշալոյս ի խմբագրութեան հաս-
ցին .

Արեօնաճէր ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Սեփական Տպարան ԱՐԵՎԼՈՅՈՍ Լրագրոյ

GRAND BAR ABBAS

ՇԱՐՔ ՊԱՊ ԷԼ ՊԱՀՐԻ ԵՍԻԿԻՆ ՖԼԱՇԻՆ ՏԵՂ

Սեփականութեամբ Ս. ԲԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՔ

Անցեալ Մայիս 1 ին տեղի ունեցաւ քաղաքի Կոստ Պառ Ապպարի . որ կոչուած է ըլլալ ընտանեկան հաստատութեան մը , ճոխ և ամենամաքուր
սպասաներով կանաչուած .

ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԽԱՄԵԱԼ . ՍՐԱԳ ԵՒ ԿԱՆՈՒԱՒՈՐ .

Կը հրաւիրուին Հայ ընտանիքները . յետ այսու իրենց ժամադրաւորը ընտրել կոստ Պառ Ապպարը . վստահ ըլլալով թէ՛ զո՛ս պիտի մնան իրենց ընծայե-
լի նախապատուութենէն .

Կապ Պառ Ապպարը մասնաւոր խնամքով ընտրած է իր բոլոր ըմպելիները՝ և գարեջրներուն ամեն լաւագոյն տեսակներուն հետ , առաջնութիւն
պիտի տրուի : ԼՕՎԷՆ ՊՐԱԻՆ , տեսակին՝ որ ճաշակաւորներուն քով մեծ ընդունելութիւն գտած եւ համբաւեալ է .

Օ՛ն ուրեմն . փութացէք գէպի Պար Ապպար .

Ս. ՓԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՔ